ցընում է ապոստամբական դրօշակը: Իրերի մէջ, Նիցցայում սարքուած ազգային երեկոյթից մնացած, մեծ մի եռագոյն դրօշակ է գտնում եւ խոհանոցի առջեւ կախում:

— Էլ չասես, որ վարագոյր չկայ:

Սաթօ ջան դու մեզ պիտի կործանես: Դրօշակը, Դաշնակցական դրօշակը, նայում է դրան, դուռը նայում է փողոցին, փողոցը նայում է միլիցիաականների դրասենեակին, դրասենեակը Զեկային, Զեկան պետութեան, պետութիւնը Մոսկուային, Մոսկուան Լենինին, Լենինը դամբարանի ձեղունին... Տես բանը ո՞ւր կարող է գնալ:

Բայց Սաթօն յամառ —

— Իսկի էլ մի վախիր, միլիցիաականները իգդիրցի են, Դրօի հայրը էստեղ ա...մեր բաղը...

Այն օրուանից ի վեր, բոլոր ծանօթներս հաղիւ դուռը բաց են անում, մնում են քարացած:

— Վտանգաւո՞ր է:

— Չէ՛... Հը՛... մը՛... Դէ ի՞նչ կայ որ...

Եւ խօսում են ուրիշ բանի մասին:

Ես անհանգիստ եմ: Նրբանցքի մէջ պոռացող այդ գոյները, բոցավառ այդ նշանները, տրամութիւն եւ վախ են ողջունում:

Իսկ կանայք նայում են կտաւին: Առաջնակա՛րգ: Հայաստանը տակնուվրայ անես՝ այդպէսի կտաւ չես գտնիր: Դրանի՞ց էլ լաւ վարագոյր...

Մեծ վիճաբանութիւններից յետոյ վերջապէս գալիս ենք համաձայնութեան՝ գոյները տեղափոխել:

Պետութիւնը այլեւս կարող է հանգիստ լինել: Խոհանոցում թէպէտ լուրիան եռում է եռագոյնի մօտ, սակայն, գոյները փոխել են իրենց տեղը եւ Խորհրդային աշխարհի հիմքերը փլուզումի վտանգից զերծ են...

— Սաթօ, փողոցի դուռը բա՛ց արա, որ հոտը դուրս գնայ:

Էլ վախ չունենք:

Եւ լուրիայի հոտը գնում խառնւում է փողոցի ուրիշ կծու եւ դառն հոտերին: Ու եռագոյնը նոյնպէս, իր բանտի միջից, ճառագայթների վրայ սահելով, սողում է դուրս, օդի հեռուը հայելիների մէջ արտացոլւում, պատերի տակ բոց չարժում, տանիքների վրայ վերջնալոյսեր ցցում եւ, ո՞վ է իմանում, ո՞վ է իմանում, ապահովապէս՝ յօրանջող, ծոյլ եւ խորամանկ միլիցիականների դէմքի վրայ կասկած հովահարում եւ պատերի տակ կոկորդիլոսի բիբեր չարժում:

Այսօրուան օրս, բոլոր պատերը վար նետուած են:

Ականջներում անթել հեռադիտակը բոյն է դրել, եւ ամենաանչան ձայները մեծանում եւ ուռչում են: Ամէն աչք հեռադիտակ է, որովհետեւ երբեք աստղերը մարդկային սրտից այդքան չէին հեռացած:

Պետութիւնը նայում է փողոցին, փողոցը աչքը յառում է պատուհանի ծակից եւ դիտում է Սաթօյի ձեռքին չարժուող աւելը. իսկ Սաթօն ծիծաղում է դրպանիս մէջ ուռած միլիարդների վրայ եւ զարմանում է, որ արտասահմանից ոսկի չեմ բերել:

Խուլ այդ դրամն իրականի մէջ սրտառուչ մի մելոդրամա է: Դաշնամուրը ընկերակցում է օրուան բոլոր դէպքերին: Ժան Լաֆորգի փողոցներում փնտռած մելամաղձոտ ձայները սենեակիս մէջ ազմկալից միտինգ են կազմել եւ պապա Զերնին՝ չա՛ն որդին՝ մեծ աղմուկով ապակի է փշրում: Երբ Պղատոնը գրում էր իր «Հանրապետութիւնը», դաշնամուրը դեռ հնարուած չէր, թէ չէ բանաստեղծների հետ միասին նա կը վտարէր ե՛ւ դաշնակահարները: Այդ մասին կասկած չունիմ:

Ընտանեկան իդիլիան...

Բեթհովէնը, սեւ մի դագաղի առջեւ նըստած, ջրվէժներին նշան է անում, մրրիկներ բաց թողնում, անտառներ չարժում եւ ձեռքը սրտին սեղմած հեծկլտում:

Եռագոյն դրօշակի ետեւ պնակները ծընդաների նման աղմկում են, լուսնոյ խաւարումի սատանան փախցնելու ժամանակուան պէս:

Սենեակի միւս անկիւնում, բարբարոսները մեկնում են պատերազմ եւ երախաները, թիթեղէ տուփերի վրայ զարնելով, որոշում են Ղարսը ետ առնել:

Ես, գրիչս ձեռքիս, ներշնչում եմ որոնում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան